

Այս Յայամաւուրը զրուած է վաստակաւոր Մարտիրոս Խիզանցիի կողմէ : Ան վ'աւելցնէ . «Շնորհիւ Տեառն սկսաք եւ ողորմութեամբ նորին կատարեցաք ես եւ եղբայրն իմ տէր Սարգիս քաջ քարտուղարն զսուրբ զիրքս եւ զա(ստուա)ծախաւս տառս ի քաղաքիս որ կոչի Խիզան, ընդ հովանեաւ սուրբ եկեղեցեացս Սուրբ Յարութեան եւ Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Յովանես Մկրտչին եւ Սուրբ Ստեփաննոսին եւ Սուրբ Սարգսի զօրավարին, եւ որդւոյն նորա Սուրբ Մարտիրոսին : Ի մեծ թուականն Հայոց ի Ռ. եւ ԾԳ. (1604) ամին : ... Դարձեալ ի յայսմ ամի ել արքայն պարսից Շահաբասն ի յԱսպահանայ եւ եկեալ բազում զօրօք ի վերայ քաղաքին Թաւրիզոյ» :

Սոյն յիշատակարանը կը թուէ Խօջայ Խաչիկին հայրը՝ Մէլքում, եւ մայրը՝ Շահրիխաս : Կը յիշէ նաեւ անոր պապը՝ Սօլթան Բէկ, եւ մեծ մայրը՝ Ազատ : Իրեն թոռան եւ որդւոյն պէս մեծատուններ էին Սօլթան Բէկ եւ Մէլքում, որոնք՝ անտարակոյս՝ թողուցած ըլլալու են իրենցմէ մեկենասեալ ձեռագիրներ :

Մարտիրոս եւ Տէր Սարգիս Խիզանցի եղբայրները՝ մինչ Խիզանի

տուածասէր եւ հաւատարիմ տանուտրոջ Խօջայ Խաչիկին եւ կողակցին իւրոյ Մարիամին, եւ որդւոցն՝ Խօջայ Սաֆարին եւ Նազարին, Սինանին, զԸւանին եւ Բազումին, եւ ծնողացն՝ Մելքումին եւ Շահրիխասին, եւ եղբայրցն՝ Վաթանին եւ Խօջայ Բարային, եւ քրւերն՝ Սօլթանջանին, եւ թոռանցն՝ Մէլք աղին եւ Զալալին, Ֆոսանկուլին եւ Սուլթանին, եւ զստերացն՝ Եղջխասին եւ Ազատին, եւ հարսներացն՝ Սուլթանիւշին եւ Խաթունջանին, եւ եղբայր կանանցն՝ Դաստազուլին եւ Խութուլ Խաթունին. եւ մեծ պապուն՝ Սօլթանրէկին, եւ մեծ մամուն Ազատին, եւ եղբայր զստերցն՝ Իփարին եւ Խութային, Թութիկին եւ Ծաղիկին, եւ մեծ տատիկին, եւ ամենայն ազգականաց, մեծի եւ փոքու առ հասարակ ամենեցուն. ամէն» :

«... Խօջայ Խաչիկին, եւ ծնողացն՝ Մելքումին եւ Շահրիխասին, եւ եղբայրցն՝ Վաթանին եւ Խօջայ Բարային, եւ քրւերն Սօլթանջանին, եւ կողակցին Մարիամին, եւ որդւոցն՝ Խօջայ Սաֆարի եւ Նազարին, Սինանին, զԸւանին եւ Բազումին, եւ թոռներաց՝ Մելք աղին, Զալալին, Ֆոսանկուլին եւ Սուլթանին եւ ամենայն արեան մերձաւորացս ... (պակասաւոր, հաւանաբար՝ ինկած թերթի մը պատճառով) ... Թափառիկս եւ ունայնս ի գործոց բարեաց, Մարտիրոս սուտանուն քահանայ, որ անուամբս միայն եմ, եւ գործովս՝ ոչ, այլ հեռացեալ եմ ի բարի գործոց, զչարս անեկող եւ զբարին խափանեկող, տկարացեալ մարմնով եւ տկարացեալ հողով. քանզի են բեռնիք մեղաց իմոց անթուելի մարդկան, անթիւ բազմութեամբ իբրեւ զաւազ ծովու ... ամէն» :

«Շնորհիւ տեառն սկսաք եւ ողորմութեամբ նորին կատարեցաք ես եւ եղբայրն իմ տէր Սարգիս քաջ քարտուղարն, զսուրբ զիրքս եւ զաստուածախաւս տառս, ի քաղաքիս որ կոչի Խիզան, ընդ հովանեաւ սուրբ եկեղեցեացս սուրբ Յարութեան եւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Յովանես Մկրտչին, եւ սուրբ Ստեփաննոսին եւ սուրբ Գրիգորին, սուրբ Սարգսի զօրավարին, եւ որդոյն նորա սուրբ Մարտիրոսին : Ի մեծ թուականն Հայոց ի Ռ. եւ ԾԳ. (1604) ամին : Ի հայրապետութեան Հայոց տեառն էջմիածին տէր Գրիգորի ամենայն Հայոց : Եւ ի կաթողիկոսութեան Աղթամարայ տէր... (չէ գրուած)» :